

# «ԵՐԳ ԵՐԳՈՑԸ» ՈՐՊԷՍ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՀՆԱԳՈՅՆ ՄԻ ԾԷՍ

Անահիտ Մխիթարեան

*1. «Երգ երգոցը» նախաքրիստոնէական շրջանից պահպանուած հարսանեկան ծէսի մի դրուագ է, որը մուտք է գործել Աստուածաշունչ մատեան որպէս եբրայական սիրային հնագոյն երգերի մի ժողովածոյ: Այն ձեւաւորուել է Ք.ա. Գ դարում, սակայն նրա բովանդակութիւնը քրիստոնէական շրջանում մերժուել է եւ ընկալուել իբրեւ Քրիստոս-փեսայի եւ հարս-եկեղեցու խորհրդանշական այլաբանութիւն: Քրիստոնէական աւանդութիւնն այն վերագրել է եբրայեցիների արքայ Սողոմոնին, որը սիրոյ երգեր է ձօնել իր կնոջը՝ Սուլամիթային:*

*Ըստ գերմանացի ասորագէտ Ֆրիդրիխ Դելիչի՝ «Երգ երգոցը», որպէս սրբազան ստեղծագործութիւն, հանդէս է գալիս երեք տեսակի յարաբերութիւններում. ա) կրօնաբարոյականութիւնն է, որտեղ նկարագրւում է ամուսնութիւնը, բ) եկեղեցական-պատմականն է, ուր ներկայացւում է հրէայ ժողովրդի եւ Եկեղեցու ճակատագիրը Սողոմոնի թագաւորութեան ժամանակաշրջանում: Եւ գ) նախատիպականութիւնը, քանի որ ամուսնութիւնը նախակերպաւորում է Քրիստոսի եւ Եկեղեցու կապը[1]: Այս երեք տեսակների հիման վրայ էլ հիմնականում քննուել եւ մեկնաբանուել է «Երգ երգոցը»:*

*Կայ նաեւ մէկ այլ տեսակէտ. «Համաձայն Որոգինէսի վկայութեան՝ Իսրայէլում մինչեւ երեսուն տարեկան հասակն արգելուած էր կարդալ այս գիրքը (ինչպէս նաեւ՝ Աստուածաշնչի սկիզբը, Եզեկիէլի մարգարէութեան սկիզբն ու վերջը)»[2]:*

*Որոգինէս Աղեքսանդրացին «Երգ երգոցը» համարել է «ամուսնական երգ», այսինքն՝ «հարսանեկան երգ», քանի որ այնտեղ գործող անձինք նոյնն են, ինչ հարսանեկան ծէսի ժամանակ՝ հարս, փեսայ, հարսնացուի ընկերուհիներ եւ փեսացուի ընկերներ[3]:*

*«Երգ երգոցի» առաջին մեկնիչները եղել են Հիպոլիտոս Բոստրացին (236 թ.), Որոգինէս Աղեքսանդրացին (254 թ.) եւ Գրիգոր Նիւսացին (394 թ.): Հայ մատենագրութեան մէջ «Երգ երգոցի» մեկնութեանը, աւելի ճիշտ՝ յիշատակութեանն առաջին անգամ հանդիպում ենք Ագաթանգեղոսի մօտ:*

*Ագաթանգեղոսի երկում՝ «Սուրբ Գրիգորի վարդապետութիւնը» գլխում, «Երգ երգոցի» մի հատուածի առկայութիւնը վկայում է, որ այն մինչ քրիստոնէութիւնը պէտք է երգուած լինէր գրաւոր կամ բանաւոր:*

*Ահա թէ ինչպէս է մեկնում «Երգ երգոցը» Ագաթանգեղոսը. «Այս այն է, որ ասեն. «Եղբօրորդեա՛կ իմ, յարիցես, զարթիցես, մերձաւո՛ր իմ, սիրելի՛ իմ. բացցես ինձ զդուրս տանն, եւ համբու-*

1 *Толковая Библия или комментарий на все книги Св. писания Ветхого и Нового Завета*, Т. V, Санкт-Петербург, 1908, ст. 44 ("*Книга Песни Песней Соломона*").

2 *«Երգ երգոց» հանդերձ մեկնութեամբ նախնեաց* (աշխ. Տ. Մեսրոպ քհն. Արամեան), «Գանձասար», Եր., 1993, էջ 11

3 *Толковая Библия или комментарий на все книги Св. писания Ветхого и Нового Завета*, Т. V, ст. 44.

© National Library of Armenia

*ըեսցես զիս ի համբուրից բերանոյ քոյ, զի առատ են ստինք քո քան զգինի, ու հոտ իւղոց քոյ քան զամենայն խունկս անուշութեան...»[4]: Ագաթանգեղոսի «Այս այն է, որ ասեն» խօսքերը վկայում են, որ հաւանաբար եղել է բանաւոր զրոյց, պատմութիւն: Որպէս բանահիւսութիւն՝ այն դարեր շարունակ պատմուել, երգուել եւ իր ուրոյն տեղն է գտել Աստուածաշնչում:*

*«Երգ երգոցը» քրիստոնէաբար է մեկնաբանուել նաեւ Հայաստանում հետագայ դարերում՝ Գրիգոր Նարեկացու, Վարդան Արեւելցու, Գրիգոր Տաթեւացու, իսկ աւելի ուշ՝ ԺԸ-ԺԹ դարերում՝ Աբրահամ Պոլսեցու, Յակոբ Կարնեցու, Խաչատուր Կարնեցու, Պետրոս Բարդումեանի եւ ուրիշների կողմից: Բոլոր մեկնիչներն էլ փորձել են «Երգ երգոցը» ներկայացնել որպէս այլաբանութիւն:*

*Միջնադարում գրուել, երգուել ու շօշափուել է սիրոյ թեման, սակայն Վերածննդի շրջանում այն մեկնաբանուել է այլաբանօրէն: Վերցնենք, թէկուզ, Նարեկացու տաղերը՝ «Մեղեդի ծննդեան» («Բերանն երկթերթի, վարդն ի շրթանց կաթէր, լեզուին շարժողին քաղցրերգանայր տաւիղն», «Ծոցն լուսափայլ, կարմիր վարդով լցեալ, ծղիքն ծիրանի, մանուշակի հոյլք»), «Տաղ քաղցրիկ» («Ահա նա հարսն իմ ցանկալի, սիրով կապեալ ընդ փեսային»), «Մեղեդի յարութեան» («Հաւուն հաւուն արթնացեալ, դիտելով զհեթանոսս՝ Ձայնէր ձայնէր տատրակին՝ սիրասնունդ սիրելոյն»)[5]:*

*Հետեւաբար չի բացառւում, որ հրէական ժողովրդական բանահիւսութեան այդ նմոյշը, հետագայում ընդգրկուելով Աստուածաշնչում, պահպանուել է նոյնութեամբ: Ինչպէս Գրիգոր Նարեկացին է գրել. «Արդ՝ չիք յերկրի պատուականագոյն եւ առաւել, քան զսէր առն եւ կնոջ: ...Իսկ որ անբիծ եւ անարատ գայ 'ի սուրբ յամուսնութիւն, եւ անճառ սիրով սրբով Հոգւոյն Սրբոյ իցեն միաւորեալ ընդ միմեանս, այլ օրհնութեամբն օրհնին, որով Ադամն եւ Եւայն օրհնեալ միաւորեցան»[6]:*

*Այդպէս է ընկալւում նաեւ նշանադրութեան ժամանակ եկեղեցում քահանայի կողմից «Ընթերցուածս յԵրգոց երգոյն Սողոմոնի» հատուածի ընթերցումը.*

*«Փախի՛ր եղբօրորդի՛ իմ, եւ նմանեաց այծեմանց կամ որթոց եղանց 'ի վերայ լերանց խնկաբերաց: Բարձրասցի թագաւոր մեր՝ յշտեմարանս եւ 'ի գահոյս մեր. իբրեւ արմաւ ոսկեղէն զմռսալից լցցին տաշտք մեր: Դարձցի թագաւոր անդրէն, 'ի մանկութիւն, սիրելին 'ի սենեակս մեր. երգեսցուք զսէր: Ես իսկ եմ երգ սաղմոսարանի, երգեցից ընդ ընկերս իմ, երգեսցուք եւ ուրախ լիցուք 'ի քեզ, թագաւո՛ր սիրելի. թէպէտ եւ ծածկեցաք 'ի տեսլենէ՝ աչք մեր յիսնաւորք: Տէր արար զքեզ, պատրաստեաց զքեզ, գեղեցիկդ 'ի կանայս, մայր քո ծնցի մարմին անտխեղծ»[7]:*

*2. Հայ իրականութեան մէջ Վերածննդի շրջանում, այնուամենայնիւ, նկատւում են հեթանոսական հայեացքների, բնապաշտական աշխարհազգացման հետքեր ոչ միայն միջնադարեան քնարերգութեան մէջ, այլեւ հարսանեկան ծէսում ու ծիսական երգերում՝ «Թագուորագովքերում», որի ժամանակ գովերգում են փեսային (հարսանեկան երգերում փեսային «թագուոր» կամ «թագաւոր» են անուանում), եւ «Ծաղկոցի» ծիսական արարողութեան ժամանակ, որը կապուած է «թագուհու» (հարսնացուի) հետ:*

*Ուզում ենք յատկապէս անդրադառնալ «Թագուորագովքի» ու «Ծաղկոցի» ծիսական արարողութիւններին, քանի որ նոյնանում են «Երգ երգոցի» հետ եւ ունեն ընդհանուր եզրեր:*

Թագւոր բարով, հազար բարով,
Դու վարդ իս կանաչ տերեւով,
Աստուած զէն քու արեւն օրշնէ
Երկնուց գետնուց զօրութենով[8]:

*Իսկ «Երգ երգոցում» փեսայի գովքը հետեւեալ կերպ է արտայայտւում.*

...Գլուխ նորա յոսկոյ կեփազեայ, վարսք նորա կոաձոյք՝ սեաւ իբրեւ զագաւաւ: Աչք նորա իբրեւ զաղաւնիս ի վերայ լիութեան ջրոց, լուացեալ կաթամբ... *եւ այսպէս շարունակ:*

*Բնապաշտական ըմբռնումների համաձայն՝ ամուսնացող զոյգերի գովքը, ըստ էութեան, կապւում է պտղաբերութեան ու բեղմնաւորման գաղափարի հետ: Դրա վառ օրինակն են հարսանեկան ծիսական արարողութիւնները, որոնց միջոցով ակնկալում են սէր, ամուր ընտանեկան միութիւն եւ պտղաբերում ու բազմացում:*

*«Թագուորագովքը», հաւանաբար հեթանոսական ծէսի մի մնացուկ է, երբ գովերգել ու զարդարել են թագաւորին եւ ընծաներ նուիրել, եւ այս ամէնը կատարուել է յատուկ արարողութեամբ: Հարսանեկան ծէսի ժամանակ այդպէս գովերգել ու զարդարել են ոչ միայն փեսային, այլեւ այն ծառը, որը կոչւում է «թագուորի ծառ», իսկ ծէսը՝ «թագուորի ծառ փնջել». գուցէ սա էլ աւելի վաղ շրջանի մի ծէս է, որը գալիս է ծառի պաշտամունքից, այսինքն՝ բնապաշտութիւնից: Յայտնի է, որ հնուց ի վեր գերդաստանի, տոհմի, ընտանիքի խորհրդանիշն են համարուել կենաց ծառերը (կամ՝ ծառն ընդհանրապէս), որոնք վաղ ժամանակներում մեծ տեղ են գրաւել յատուկ տօնահանդէսներում, իսկ հետագայում՝ հարսանիքներում: Հայոց մէջ ծառերի պաշտամունքի գլխաւոր նախապայմանը պտղաբերութեան, առատութեան խորհրդանիշն է եղել: Սիրոյ եւ պտղաբերութեան խորհրդանիշ են համարուել նաեւ ուռենու ճիւղը, ոստը, հատիկն ու ծաղիկը:*

*Այս բոլորը կարելի է տեսնել նաեւ Հայոց հնագոյն մշակոյթի յուշարձաններում:*

*«Հայաստանի ուշ բրոնզեդարեան շրջանում կանանց կերպարանքով կուռքերը արտայայտում են «մայր-երկիր-ծառ-կին» նախասկզբնական, համամարդկային սինկրետիկ գաղափարը, որն առանձնապէս յստակ է դրսեւորւում արեւելեան կրօնի ու արուեստի մէջ: Այստեղ պտղաբերութեան աստուածութիւնները յաճախ պատկերւում էին կա՛մ ծառից դուրս եկող կանացի իրանի ձեւով, կա՛մ կնոջ կերպարանքով, որի ուսերին դալար ճիւղեր կան»[9]:*

*Այսպիսին էր հեթանոս հայերի Անահիտ աստուածուհին, որին զոհաբերում էին ցորենի ու գարու առաջին բերքի հասկերը, արձանը պատում էին*

4 Ագաթանգեղոս, *Հայոց պատմութիւն*, Եր., 1983, էջ 242 [440]

5 Գրիգոր Նարեկացի, *Տաղեր*, Եր., 1957, էջ 48-56

6 Գրիգոր Նարեկացի, *Մատեան ողբերգութեան եւ այլ երկասիրութիւնք*, Հազարամեակի հրատարակութիւն, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 460:

7 *Մաշտոց*, Վենետիկ-Սուրբ Ղազար, 1831, էջ 47



8 Երուանդ Լալայեան, *Բուլանըխ կամ Հարք գաւառ*,- Ազգագրական հանդէս, Ե գիրք, Թիֆլիս, 1899, էջ 132

9 *Հայ ժողովրդի պատմութիւն*, ՀՀ ԳԱԱ հրատ., հտ. I, Երեւան, 1971, էջ 275

© National Library of Armenia

*ծառերի դալար շիւերով ու պսակներով եւ նրան նուիրաբերում էին «անձեռնմխելի» ցուլեր: Այս մասին յիշատակում է նաեւ Ագաթանգեղոսը.*

*«Իբրեւ եկն եմուտ ի խորան անդր եւ յընթրիս բազմեցաւ, եւ իբրեւ ընդ գինիս մտին՝ հրաման ետ թագաւորն Գրիգորի, զի պսակս եւ թաւ ոստս ծառոց նուէրս տարցի բագնին Անահտական պատկերին»[10]:*

*Հեթանոսական այս տարրերը, որոնք սկիզբ են առել շատ հին ժամանակներից, իրենց արձագանքն են գտել ժողովրդական արարողութիւնների, տօների ու ծէսերի մէջ:*

*- Ըստ Ստրաբոնի՝ ազնուականներն իրենց կոյս աղջիկներին նուիրաբերում էին Անահիտ աստուածուհուն, այսինքն՝ նախքան ամուսնանալն այդ աղջիկները պոռնկանում էին աստուածուհու համար, որից յետոյ՝ ամուսնանում: Եւ դա անվայել չէր համարւում:*

*Հարցը կանոնակարգուեց առաջին իսկ քրիստոնէական նորմաներով:*

*Գրիգոր Լուսաւորչին վերագրուող կանոններում յիշատակւում է. «ՅԼԳ (ՅԻԹ) ԺԳ. Որ զկուսութիւն իւր Աստուծոյ նուիրեաց եւ ապա ապականեցաւ՝ է ամ ապաշխարեսցէ»[11]:*

*Հետագայում՝ քրիստոնէութեան ժամանակ, հեթանոսների մայրութեան ու պտղաբերութեան աստուածուհին փոխարինուեց Մարիամ Աստուածածնով, ուստի Անահիտ աստուածուհու հետ կապուած բոլոր ծէսերն ու արարողութիւնները վերագրուեցին Մարիամին, անգամ կենաց ծառը կապուեց Աստուածածնի հետ.*

*«Ծաղկեցաւ ծառն կենաց՝ Աստուածածինն էր.*

*Լուսեղէն պտուղ եբեր՝ իւր Միածինն էր:*

*Ճղերն ամէն արքայական՝ սուրբ առաքեալքն էր.*

*Տերեւն ամէն արփափայլ՝ սուրբ մարգարէքն էր»[12]:*

*3. Հայ կրօնական եւ ծիսական գրականութեան մէջ կենաց ծառի միջոցով գովերգուել են Աստուածածինը, առաքեալները, իսկ հարսանեկան ծէսի ժամանակ կենաց ծառի հետ կապուած է եղել ոչ թէ կրօնական, այլ աշխարհիկ, այսինքն՝ ընտանիքի, մասնաւորապէս՝ հարսի ու փեսայի նորաստեղծ ընտանիքի գաղափարը:*

*Մատենադարանի թիւ 5216 ձեռագիր Մաշտոցում (ԺԵ դ.) նկարագրուած է «Կանոն պսակ դնելոյ» ծիսական մի արարողութիւն, ուր յիշատակւում է Պօղոս առաքեալի խօսքը.*

*«Պատուական է ամուսնութիւն եւ սուրբ անկողինք նոցա եւ գիտելի է, զի պսակն սկսանի 'ի նշանագրութիւն եւ հաստատի հաւանութեամբ սրտից: ...Իսկ կատարի պսակութեամբ քահանայից, իսկ թէ վասն էր դնի նշան, ասեմք թէ որպէս ծառն զի նախ ծաղկի եւ ապա պտղաբերի, զի ծառն ծաղկով զարդարեալ է եւ ծաղիկն 'ի ծաղիկ ի ծառն կայացեալ: Այսպէս հարսն եւ փեսայն, եւ ոչ ոք կարէ բաժանել եւ որպէս հրեշտակն Գաբրիէլ ետ զաւետիսն Մարիամու, եւ նա խորհեցաւ 'ի միտսն եւ ապա հաւանեցաւ...»[13]:*

10 Ագաթանգեղոս, *Հայոց պատմութիւն*, Եր., 1983, էջ 38

11 *Մատենագիրք Հայոց («Կանոնք սրբոյն Գրիգորի»)*, հտ. Ա, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 142

12 Աս. Մնացականեան, *Հայկական միջնադարեան ժողովրդական երգեր*, Եր., 1956, էջ 295

13 ՄՄ ձեռ. թիւ 5216. *Մաշտոց*, ԺԵ դար, էջ 18ա-բ:



*Գաբրիէլ հրեշտակը մանրանկարներում («Աւետման» պատկերներում) հանդէս է գալիս ծաղիկը, գաւազանը կամ ձողը ձեռքին, իսկ ձեռագրերից մէկում (ՄՄ ձեռ. թիւ 7780. Աւետարան, 1708-1711 թթ., Կաֆա) նա պատկերուած է պտղաբերութիւն խորհրդանշող ոստը ձեռքին, որի վրայ գրուած է. «Ողջոյն ընդ քեզ, Մարիամ»: Բացի այդ, ըստ քրիստոնէական բանաւոր աւանդազրոյցների՝ Գաբրիէլ հրեշտակը կուսում է վիշապի հետ՝ ազատելով արեգակին, որը պատկերւում է աղջկայ կերպարանքով:*

*Թէ՛ Պօղոս առաքեալի յիշատակութիւնում եւ թէ՛ այլ վկայութիւններում, Պսակի արարողութեան հետ կապուած, զգացւում են նախաքրիստոնէական տարրերը:*

*Ահա դրանցից մէկը ԺԸ դարի աստուածաբան, փիլիսոփայ եւ մեկնիչ Պետրոս արքեպիսկոպոս Բարդումեանի «Երգ երգոցի» մեկնութեան մէջ.*

«...Այն օրն Աստուած մեծ եւ հզօր սուրբ սուրն իջեցնելու է կամակոր վիշապ օձի վրայ եւ սպանելու է վիշապին ծովում *[Եսայի ԻԷ 1]:* Այսպէս պատերազմելով հարուածեց երկրի ծագերից մինչեւ ծագերը, փշրեց աղեղները, խորտակեց զէնքերը եւ ասպարները հրով այրեց *[Սաղմ. ԽԷ 10]: Այս աւարի համար էր աղօթում աստուածահայր մարգարէն եւ պաղատում հոգիների փեսային՝ ասելով.* Սո՛ւր կապիր Քո մէջքին, հզօ՛ր *[Սաղմ. ԽԴ 4]:* Նմանապէս եւ նրա զօրավարներն ու զօրքը պահպանում են մեր հոգիների փեսայ Սողոմոնի գահը եւ նրա համար ամէն ժամ պատերազմում, ինչպէս Միքայէլ հրեշտակապետն էր Մովսէսի մարմնի համար վիճում բանսարկուի հետ: Միքայէլն ու հրեշտակները կուում են վիշապ օձի հետ եւ յաղթեցին նրան Գառան Արեամբ եւ, շղթաներով կապելով, փակեցին նրան դժոխքի խորքում *[Յուդա Ա 9, Զաք. Գ 1, Յայտ. ԺԲ 4 եւ Ի 1]»[14]:*

*Ինչպէս տեսնում ենք, սա վիշապամարտի փայլուն դրսեւորում է: Ըստ բանագէտ Սարգիս Յարութիւնեանի՝ «Վիշապամարտը մեծ մասամբ առաջադրւում է իբրեւ ամուսնութեան կանխապայման կա՛մ աղջկայ կողմից, կա՛մ նրա հօր:* Իսկ առանձին դէպքերում վիշապամարտը բուն ամուսնութեան նպատակն է, այսինքն՝ հերոսը, սպանելով վիշապին, ազատում է աղջկան, որի հետ էլ ինքն ամուսնանում է»[15] *(ընդգծումն իմն է):*

*Վիշապամարտի գաղափարը թէ՛ էպոսում, թէ՛ հեքիաթներում եւ թէ՛ առասպելում («Վիշապաքաղ Վահագնի պատերազմը») մնում է նոյնը: Անյիշելի ժամանակներից այդ մասին բազմիցս պատմուել ու բանաւոր զրոյցներ են հիւսուել, սակայն քրիստոնէութեան ժամանակաշրջանում այս աւանդազրոյցները վերագրուել են Գաբրիէլ հրեշտակին:*

*Վիշապամարտի դրսեւորումն առկայ է նաեւ «Երգ երգոցում».* Ահա գահոյք Սողոմոնի. վաթսուն սպառազէնի շուրջ զնովաւ 'ի քաջացն Իսրայէլի ամենեքեան սուսերաւորք հմուտք պատերազմի, այր իւրաքանչիւր սուր յազդեր յարհաւրաց գիշերոյ *[Երգ. Գ 7]:*

*Առաջին հայեացքից թւում է, թէ սա ռազմաշունչ ու պատերազմական գործողութիւնների նախապատրաստութիւն է, բայց ահա շարունակութեան մէջ այլ կերպ է մեկնաբանւում.* Գահաւորակ արար իւր արքայ Սողոմոն 'ի փայտից Լիբանանու. զսիւնս նորա գործեաց արծաթիս, զկոնք նորա ոսկի եւ զձեղուն նորա

14 Պետրոս Բարդումեանի *«Երգ երգոցի» մեկնութիւնը*, «Գանձասար», Բ, Եր., 1992, էջ 232

15 Սարգիս Յարութիւնեան, *Վիշապամարտը «Սասնա ծռերում»*, «Լրաբեր», թիւ 11, 1981, էջ 65

© National Library of Armenia

ծիրանի, զմէջ նորա ականակապ. տարածեալ զսէրն ի դստերացն Երուսաղէմի: Ելէք եւ հայեցարուք, դստերք Սիոնի, յարքայ Սողոմոն ի պսակն, որով պսակեաց զնայ մայր իւր յաւուր փեսայութեան իւրոյ, եւ յաւուր ուրախութեան սրտի իւրոյ *[Երգ. Գ 10]:*

*4. Հայկական հարսանիքներում (թէ՛ այժմ եւ թէ՛ հնում) մակարները, որոնց այլ կերպ ասում են նաեւ՝ ազապներ, ազապբաշիներ կամ ազապչարիներ, թագուորցիք, ինչպէս եւ խաչեղբայր, հանդէս են գալիս որպէս թիկնապահներ, որոնք զինակիցների նման պահպանում են թագաւորին (փեսային) եւ նրա պատիւը, որպէսզի ոչ ոք չոտնահարի նրա արժանապատուութիւնը: Ազգագրական որոշ շրջաններում (Մուշ, Վասպուրական, Ջաւախք եւ այլն) անգամ պարզորոշ կերպով դրսեւորւում էր նրանց՝ զէնքերով ու զրահներով զինուած պաշտպանիչ դերը:*

*Վարանդայում «Հարսնած գնալու» ծիսական արարողութեան ժամանակ հարսի հարազատներից մի երիտասարդ, ձեռքին կարմիր խնձոր բռնած, գալիս է փեսայի տուն եւ բոլորին հրաւիրում հարսնացուի տուն: «Մակարբաշու կարգադրութեամբ մակարները գնում զինւում եւ գալիս են: Իսկոյն, ձեռներին մի-մի մոմ առած, շրջապատում են թագուհուն ու քաւորին եւ դաւուլ-զուռնի առաջնորդութեամբ ուղեւորւում դէպի հարսնացուի տունը: Ճանապարհին մակարները պարում, երգում, բղաւում եւ հրացաններ ու ատրճանակներ են արձակում»[16]: Այս սովորութիւնը պահպանուել է ազգագրական շատ շրջաններում: Որոշ շրջաններում նոյնիսկ ազապներին ասում են նաեւ զինուորներ կամ «զինակիր ազապչարիներ», որոնք կոչուած են պաշտպանելու թագաւորին (փեսային) չարից, չար ուժերից, որպէսզի չվնասեն նորապսակներին:*

*Հարսանեկան ծէսի այսպիսի դրուագներ հանդիպում ենք նաեւ միջնադարեան ձեռագրերում, որտեղ կրօնաեկեղեցական արարողութիւնների կողքին իրենց տեղն են գտել նաեւ ժողովրդական ծիսական արարողութիւնները: Ձեռագրերից մէկում[17] պատկերուած է մի մանրանկար՝ բաժանուած երկու մասի. վերեւի մասում «Հարսանիքը Կանայում» պատկերն է, երբ Քրիստոսը ջուրը գինի է դարձնում, իսկ ներքեւի մանրանկարն աւելի շատ աշխարհիկ բնոյթ ունի. հարսանեկան ծէսի մի դրուագ է՝ մի կողմում գինարբուքը, միւս կողմում՝ փեսան: Փեսայի թիկունքին, որպէս պահապան, կանգնած է խաչեղբայրը (ազգագրական որոշ շրջաններում խաչեղբայրը նոյնանում է քաւորի հետ, իսկ որոշ տեղերում՝ ազապբաշու)՝ մի ձեռքում բռնած խաչփայտը՝ վրան վառուող մոմեր, իսկ միւսում՝ թուր, որով նա կարծես պահպանում է փեսային:*

*Սա իր արձագանքն է գտել նաեւ ժողովրդական երգերում («Ծաղկեցաւ ծառն կենաց»).*

Հրեղէն թուրն ի ձեռին՝
Այն խէչեղբայրն էր[18]:

*5. Հարսանեկան ծէսը, ըստ էութեան, նուիրագործական է, որը ներկայանում է առանձին սիւժէների ձեւով, իսկ այդ սիւժէներից իւրաքանչիւրը, առանձին վերցրած, առասպելաբանական պատկերացումների մի ամբողջութիւն է: Այդ առասպելաբանական մոտիւները հիմնականում կապուած են հարսի ու փեսայի հետ, քանի որ նրանց ամուսնութիւնը նման է ե՛ւ վերոյիշեալ առասպելական սիւժէին, ե՛ւ հրաշապատում հեքիաթի սիւժէին, ուր հերոսը, յաղթահարելով մի շարք դժուարութիւններ ու փորձութիւններ, հասնում է իր վերջնակէտին, որը ծէսում հարսանիքն է: Այստեղ առկայ է ինիցիացիայի ծէսը, որտեղ թագաւոր-փեսա-հերոսը պէտք է յաղթահարի մի շարք դժուարութիւններ ու փորձութիւններ եւ յետոյ ամուսնանայ: Այս երեւոյթը, աւելի ճիշտ՝ ծէսը, որը վաղնջական ժամանակների դրսեւորումն է, արտայայտւում է նաեւ «Երգ երգոցում» եւ գրեթէ նոյնութեամբ պահպանուել է մինչեւ ԺԹ-ի դարերը:*

*«Թագուորի ծառ փնջելու» ծիսական արարողութեան ժամանակ փեսայի ծառը գովելու համար հարսանքատուն են մտնում կենդանիներ ու թռչուններ, որոնք, կենդանակերպ զգեստներ հագած, զանազան դերակատարներ են եւ օրհնում են այդ ծառը:*

*Ակնյայտ են ծէսի բնապաշտական տարրերը, քանի որ այստեղ առկայ է ոչ միայն ծառի պաշտամունքը, այլեւ կենդանիների ու թռչունների, որովհետեւ (ըստ փեսայի ցանկութեան) ծառը գովերգելու համար գալիս են՝ «Խօսան պիւլպիւլն», «Եղնիկ դաշտէն», «Գառն արեգոյն», «Արդար մեղուն»: Ի հարկէ, սրանք իսկական կենդանիներ ու թռչուններ չեն, այլ կենդանակերպ դերակատարներ. դա պարզ երեւում է ժողովրդական խաղիկներում.*

-Թագաւո՛ր, յամէ՛, կի՞չ կիտէյայ,
Որ քոյ ծառին, հա՛յ, գովքն ասէյանք:

-Գնացէ՛ք, բերէ՛ք, Խօսան Պիւլպիւլն,
Որ գայ՝ գովէ, հա՛յ, ծառս ու ծաղիկ[19]:

*Միւս օրինակը մեզ յայտնի «Էն դիզան, բէտ-բէտ դիզան» երգն է.*

-Ադիւծներ մըրմըռալէն,
Տեսէ՛ք, թէ էն ո՞րն է:

-Ադիւծներ մըրմըռալէն,
Վարդապետներ է[20]:

*Նման երեւոյթի մենք հանդիպում ենք նաեւ Բարեկենդանի եւ Ամանորի տօներին, այսինքն՝ տօների ժամանակ հայ իրականութեան մէջ եղել են դիմակաւորուած անձիք, որի նպատակը, հաւանաբար, եղել է ծիսականօրէն արտայայտել տօնի բովանդակութիւնը[21]: Թռչնակերպ ու կենդանակերպ դերակատարները միայն հայկական ծէսում չէ, որ հանդէս են գալիս, այլ բոլոր այն ժողովուրդների մօտ, որոնք կապուած են տոտեմիզմի հետ:*

*Ինչպէս գիտենք, հարսանիքի ժամանակ ի յայտ է գալիս նաեւ անձնաւորուած մի կենդանի՝ աղուէսը, որի դերը կարեւորւում է արարողութեան ժամանակ: Հայկական հարսանիքներում աղուէսին շատ կարեւոր տեղ ու դեր է յատկացուած: Ժողովուրդը մեծարում է նրան՝ տալով զանազան ընծաներ: Բոլոր դէպքերում էլ աղուէսը հարս տանող գլխաւոր ուժերից մէկն է:*

*Շաբաթ օրը, երբ խնամիները գնում են հարսի տուն կամ երբ եկեղեցուց հարսն ու փեսան վերադառնում են տուն, տղայի կողմից մէկը, որին ժողովուրդը կոչում է «աղուէս», հար-*

---

16 Ե. Լալայեան, *Վարանդա,*- Ազգագրական հանդէս, գիրք Բ, 1897, էջ 132

17 ՄՄ ձեռ. թիւ 7757. *Աւետարան*, 1468: Հիզան (Վասպուրական)

18 Ան. Մնացականեան, *Հայկական միջնադարեան ժողովրդական երգեր*, Եր., 1956, էջ 301

19 *Նոյն տեղում*, էջ 290

20 Ղեւոնդ Ալիշան, *Հայոց երգք ռամկականք*, Վենետիկ-Ս. Ղազար, 1852, էջ 45

21 Մանրամասն տե՛ս *Հայ ազգագրութիւն եւ բանահիւսութիւն*, հտ. IX, Եր., 1978, էջ 32:



© National Library of Armenia

*սանքաւորներից շուտ է հասնում՝ ազդարարելով նրանց գալուստը:*

*«Հարսնածի մեկնելուց առաջ մի պատգամաւոր կ'ուղարկուի խնամու տուն լուր տալու, այդ պատգամաւորը կը կոչուի աղուէս»[22]: Աղուէսի պաշտօնը խիստ վտանգաւոր է, քանի որ առաջին հարուածներն ու քարկոծութիւնները իր վրայ է կրում:*

*«Հայկական հին ծէսերում, բանահիւսութեան մէջ, զարդարուեստում եւ ձեռագիր աղբիւրներում, որպէս տոտեմ, երեւան է գալիս նաեւ աղուէսը: Այն բարի ուժերի խորհրդանիշ է, որը պայքարում է չար ուժերի դէմ յանուն գարնան, բերքի ու բարեկեցիկ կեանքի»[23]:*

*Հայկական ժողովրդական հաւատալիքներում աղուէսը բարի ուժի եւ յաջողութեան խորհրդանիշ է: Գանձակի հայերը հաւատում են, որ երբ ճանապարհ գնալիս աղուէս ես տեսնում, ապա դա յաջողութեան ու բախտաւորութեան նշան է[24]: Աղուէսը շատ ժողովուրդների նախնիների մօտ համարուել է յատկապէս պտղաբերութեան հովանաւոր: Կան հրաշապատում հեքիաթներ, որտեղ աղուէսը հանդէս է գալիս որպէս հերոսի օգնական եւ ուղեկից. աղուէսն օգնութեան է հասնում դժուարութեան մէջ գտնուող հերոսին, կարեւոր խրատներ է տալիս եւ առաջնորդում դէպի կախարդական աշխարհ[25]:*

*Ինչպէս արդէն նշեցինք, հարսանեկան ծէսում առկայ է ինիցիացիայի ծէսը[26]: Մինչեւ ամուսնանալը թէ՛ երիտասարդ աղջիկը եւ թէ՛ տղան պէտք է բաւական երկար ժամանակ անցկացնէին անտառում՝ յատուկ պատրաստուած մի խրճիթում, որը հեքիաթներում «կախարդական աշխարհն է»: Ցաղթահարելով այդ փորձութիւնը՝ նրանք համարւում էին չափահաս եւ պատրաստ էին ամուսնութեան: Եւ, ահա, հերոսին, այսինքն՝ տղային այդ «կախարդական աշխարհ» ուղեկցողն աղուէսն է, որն էլ հէնց իր մասնակցութիւնն ունի հարսանեկան ծէսում:*

*Ընդհանրապէս, ծիսական համակարգերը կապուած են առասպելական անցեալի հետ: Ծէսի մէջ ամփոփուած է առասպելական մտածողութիւնը եւ այն ունի խորհրդանշական իմաստ:*

*Միջնադարեան ձեռագրերից մէկում՝ 14-15-րդ դարից մեզ հասած թիւ 3937 ձեռագրում, նկարագրւում է աղուէսի դերը հարսանեկան ծէսի ժամանակ. «Զի ի ժամ հարսանեացն հրաւիրակ առաքին ի տուն հարսին՝ տալ աւետիս գալոյ հարսանեացն, զոր գեղջուկքն աղուէս կոչեն վասն թաքնաբար գալոյն:*

*Զորոյ նշանակութիւնն Յոհաննէս Մկրտիչն է, ըստ որում ասէր ինքն, որ ունի հարսն նաեւ փեսայ...»[27]:*

22 Ե. Լալայեան, *Ազգագրական հանդէս*, գիրք Ե, 1899, Թիֆլիս, էջ 102 (Բուլանըխ կամ Հարք գաւառ)

23 Աս. Մնացականեան, *Հայկական զարդարուեստ*, Եր., 1955, էջ 264

24 Ե. Լալայեան, *Ազգագրական հանդէս*, գիրք Զ, էջ 261

25 *Հայ ժողովրդական հեքիաթներ* (կազմեց եւ խմբ. Ա. Ղանալանեանը), Երեւան, 1950, էջ 165

26 *Ինիցիացիա* (լատ. initiatio) թարգմանաբար նշանակում է՝ 1) նուիրագործում, 2) գաղտնաժիսություն: Ինիցիացիայի ժամանակ երի-տասարդները պէտք է ունենային մեծ պատ-րաստուածութիւն արտադրութեան ու հասա-րակութեան մէջ, ինչպէս նաեւ ընտանեկան կեանքում: Եւ այդ ընթացքում նրանք պէտք է անցնէին տարբեր փորձութիւններ (յաճախ տանջալից զգացողութեամբ)՝ հաղորդակից դառնալով ցեղի գաղտնիքներին ու առասպելներին:

27 «Էջմիածին», 2005, մայիս, էջ 144



*Քրիստոնէութեան շրջանում, բնականաբար, այլ երանգաւորում են ստանում եւ ուրիշ կերպ մեկնաբանւում: Աղուէսը հարսանիքի կարեւոր կերպարներից մէկն է (թէ՛ քրիստոնէութեան շրջանում եւ թէ՛ քրիստոնէութիւնից առաջ), որի ժամանակ նա հանդէս է գալիս որպէս հարս տանող հերոս եւ պայքարում է չարի դէմ:*

*Այսպիսով, կարող ենք ասել, որ աղուէսի մոտիւը հարսանիքում կապուած է տոտեմիզմի հետ, որը հաւանաբար հետագայում է իմաստափոխուել՝ ստանալով բոլորովին հակադիր նշանակութիւն: «Երգ երգոցում» աղուէսը յիշատակւում է նման մեկնաբանութեամբ. «Կալարուք մեզ աղուէսունս մանրկունս զապականիչս այգեաց, եւ որթք մեր ծաղկեսցեն» [Երգ. Բ 15]:*

*Չնայած աղուէսի գաղափարը հետագայում իմաստափոխուել է, այնուամենայնիւ, աղուէսը հայ ժողովրդի նախնիների մօտ եղել է տոտեմ, եւ նրա հետ կապուած մնացուկներն իր հետ տեղափոխուել ու պահպանուել են մինչեւ օրս:*

*Կրօնական համակարգերի անցումային շրջանում փոխւում են ծէսի միայն արտաքին ձեւերը, իսկ բուն նախնական էութիւնը, որի միջոցով վերականգնւում եւ արդիականացւում է նախասկզբնական արարչագործութիւնը, մնում է անփոփոխ:*

*6. Մենք խօսում ենք ծիսական մի արարողութեան մասին, որը կոչւում է «Թագուորի ծառ փնջել» եւ կապւում է թագուորի (փեսայի) հետ, իսկ թագուհու (հարսնացուի) հետ կապուած ծէսը կոչւում է «Ծաղկոց»:*

*«Ծաղկոցը» այն տեղն է, որտեղ հարսը հարսանիքից առաջ իր ընկերուհիների հետ անց է կացնում մի քանի օր (2-3 օր): Նրանք միասին երգում են, պարում, հիւսում հարսնացուի ծամերը, մատները հինայ են դնում եւ երգում հրաժեշտի ու բաժանման երգեր («Շեմքի՛կ, մի՛ ժաժա...», «Հրաժեշտ հարսի»):*

*Հարսը շրջապատուած է լինում իրեն հարազատ մարդկանցով՝ հարսնեղբայրներով ու հարսնաքոյրերով, որոնք պաշտպանում են նրան այնքան ժամանակ, մինչեւ որ հարսը կը մտնի փեսայի տուն. նրանց իրաւունքն է պահպանել աղջկան «չարից»:*

*Ուշադրութիւն դարձնենք այն փաստին, որ թէ՛ հարսանեկան ծէսում եւ թէ՛ «Երգ երգոցում» կան միջնորդաւորուած անձիք՝ տղայի ընկերները (մակարները)՝ հովիւների եւ աղջկայ ընկերուհիները, հարսնաքոյրը՝ Երուսաղէմի դուստրերի խորհրդանշական կերպարներով, որոնք հանդէս են գալիս ծէսի սկզբից մինչեւ վերջ:*

*Ծիսական այս արարողութեան անուանումը նոյնպէս շատ հին է: Ըստ Աբեղեանի՝ Ծաղկոցի ծէսը գալիս է թագաւորական հարսանիքներից, միւս կողմից՝ ինքը Ծաղկոցը հին առասպելական հաւատալիքների հետ կապուած ծէսերի մի վերապրուկ է, որը հասել է մինչեւ մեր օրերը:*

*Ծառն ու ծաղիկը ժողովրդական երգերում, ինչպէս եւ հայ միջնադարեան քնարերգութեան մէջ, հանդէս են գալիս իբրեւ բեղմնաւորուող ու պտղաբերուող բնութեան խորհրդանիշ, որոնք նոյնանում են նորահարսի ու փեսայի հետ եւ ուրոյն տեղ ունեն նաեւ հարսանեկան արարողութիւններում, դրսեւորւում են անգամ օրհնանքներում, բարեմաղթանքներում ու կենացներում, ինչպէս օրինակ՝ «Ծլէ՛ք, ծաղկէ՛ք, բա՛ր տաք», «Խմենք զոյգ ծաղիկների կենացը» եւ այլն:*

© National Library of Armenia

*Ծաղիկները, ծաղկած կենաց ծառերը, ոստերը, հատիկները, որպէս պտղաբերութեան խորհրդանիշ, պատկերուած էին նաեւ հայկական զարդերի, յատկապէս՝ փեսայի ու հարսի թագերի, պսակների, գօտիների վրայ:*

*Վարդան Հացունին գրում է. «Կային եւ զարդեր, որ հասարակաց էին փեսային ու հարսին: Եւ նախ «պսակ հարսանեաց»՝ ըստ Փաւստոսի[28], որ ի սկզբան դալար ծաղիկներէ կը շինուէր: Ծաղկունք կուսութեան խորհրդանշան էին[29]. այս պատճառաւ Շահապիւանի ժողովն ուռով կը փոխանակէ ծաղկեպսակը՝ կրկին ամուսնացելոց կամ ոչ կուսից վրայ, ինչպէս առեւանգողաց, ազատ կամ շինական, որոնք եթէ կոյս մնացած են՝ պսակ պիտի ընդունին. ապա թէ ոչ՝ ուռ (Կանոն Է): Նմանապէս եթէ ամուսնացելոց մին կոյս է եւ միւսը՝ ոչ, առաջնոյն պսակ պիտի դրուի, եւ երկրորդին՝ ուռ (Կան. Գ)»[30]:*

*«Երգ երգոցում» Սուլամիթայի ու Սողոմոնի գովերգերը նման են նորահարսի «Գլուխ գովելու» եւ «Թագուորագովքի» ծիսական երգերին.*

Օրիորդքն ցիարսն ասեն.

Քանզի գեղեցկացան ծնօտք քո իբրեւ զտատրակի, պարանոց քո իբրեւ զմանեակս: Նմանութիւն ոսկւոյ արասցուք քեզ՝ հանդերձ կիտուածովք արծաթոյ, մինչեւ արքայ ի գիրկս իւր ընկալցի զքեզ *[Երգ. Ա. 9]:*

*Միջնադարեան սիրոյ երգերում քնարերգուները սիրած կնոջը գովերգելու համար դիմել են բնութեան երեւոյթներին, երկնային լուսատուներին, թռչուններին ու կենդանիներին, որոնք գալիս են նախապատմական ժամանակներից, ինչպէս, օրինակ, «Աչքն ծով ծիծաղախիտ...», «Ծոցն լուսափայլ, կարմիր վարդով լցեալ» (Նարեկացին), «Ծոցդ է բաղչայ վարդով լի» (Թլկուրանցի), «Դու վարդ ու մանուշակ, ծով եւ ծիրանի, // Կանայ բուրաստան, ծաղկեալ նշենի» (Գր. Աղթամարցի), ժողովրդական խաղիկներում՝ «Ծոցդ էգի, ծառդ արմաւենի»:*

*«Երգ երգոցում» նոյնպէս նկարագրւում ու գովերգւում են Սուլամիթայի մարմնի մասերը մէկ առ մէկ՝ համեմատուելով բնութեան ու կենդանիների հետ, որոնք համարուել են պաշտամունքային՝ «Աչք քո աղաւնիք», «Ատամունք քո իբրեւ զերամակս այծից», «Գեղեցկացան ծնօտք քո իբրեւ զտատրակի, պարանոց քո իբրեւ զմանեակս», «Իբրեւ զկեղեւ նռան են այտք քո» եւ այսպէս շարունակ:*

*Այսպիսով, կարող ենք ասել, որ «Երգ երգոցը» նախաքրիստոնէական շրջանից պահպանուած հարսանեկան ծէսի մի դրուագ է: Եւ, չնայած արտաքին թուացեալ տարբերութեանը, թէ՛ «Երգ երգոցի» եւ թէ՛ հարսանեկան ծէսի հիմքում ընկած է նախասկզբնական արարչագործութիւնը, որը դառնում է սկիզբ կամ գուցէ շարունակութիւն ընտանիքի յարատեւութեան պահպանման ու որդեծնութեան եւ հանդէս է գալիս առանձին սիւժէների ձեւով:*

28 Փաւստոս Բուզանդ, 229

29 Հմմտ. Մովսէս Խորենացի, 313-314, 319:

30 Վարդան Հացունի, *Պատմութիւն հին հայ տարազին*, Վենետիկ-Ս. Ղազար, 1923, էջ 298

# ԵՐԵԽԱՅԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Աիդա Թոփուզեան

*Բոլոր ժամանակներում փիլիսոփայական եւ մանկավարժական ամենակարեւոր հիմնախնդիրներից մէկը եղել է մարդու ազատութեան հիմնախնդիրը՝ ընդհանրապէս, եւ դաստիարակչական գործընթացում երեխայի ազատութեան հիմնախնդիրը՝ մասնաւորապէս: Հասարակական կեանքի որոշակի փուլերում այս հիմնախնդիրը յատուկ հնչեղութիւն է ստանում: Հումանիստական փիլիսոփայական ուղղութեան հաստատման եւ հասարակական շարժման ձեւաւորման հետեւանքով ազատութեան կատեգորիայի նկատմամբ ուշադրութիւնը աճում է:*

*Սոցիալական մարդաբանութեան մէջ ազատութիւնը դա մարդու (սուբիեկտի)՝ իր վարքի տարբերակի (գծի) գիտակցուած ընտրութիւնն է ինչպէս արտաքին հանգամանքների, այնպէս էլ իր հոգեւոր աշխարհի վիճակի նկատմամբ, դա մարդու իրական իրավիճակի սահմաններից դուրս գալու այլ իրավիճակ եւ այլ ներքին վիճակ նախագծելու կարողութիւնն է, ինչպէս նաեւ այդ այլին հասնելու համար պրակտիկ գործունէութիւն կազմակերպելու կարողութիւնը:*

*Ըստ ամերիկացի հոգեբան Ջ. Դիւի (1859-1952)՝ «Մենք այնքանով ենք ազատ, որքանով մասնակցում ենք հասարակական կեանքին, որքանով մտածում ենք ազատ: Մենք ազատ ենք, երբ մեր գործունէութիւնը գիտակցուած է եւ հիմնուած է սեփական փորձի վրայ, երբ մենք թոյլ չենք տալիս ներքին ազդեցութիւններին մեզ այս ու այն կողմ նետել, երբ պատրաստ ենք դիմաւորել նորը, ուսումնասիրել այն եւ դրա արդիւնքները օգտագործել մեր գործունէութեան մէջ»:*

*Անցեալի եւ ներկայի հումանիստական տեսութիւններում մարդը ներկայացուած է որպէս անկախ, աւտոնոմ, ազատ էակ: Հիմնական սկզբունքն այն է, որ բացի սանի իրական ազատութիւնից, ամէն ինչ միջոց է, ազատութիւնն է նպատակը, ազատութիւնը ստեղծագործութեան մէջ արտայայտուած ակտիւութիւնն է:*

*Ազատութեան հիմնախնդրի էութիւնը մանկավարժութեան պատմութեան մէջ անձնական երջանկութեան եւ հասարակութեան ձգտող մարդու յարաբերութիւնների ներդաշնակումն է: Ներդաշնակութեան հասնելու ճանապարհը հին փիլիսոփաները՝ ինչպէս, օրինակ, Սոկրատը, տեսնում էին մարդու կատարելագործման մէջ:*

*Հելլենիստական դարաշրջանը մշակոյթի եւ մանկավարժութեան մէջ բնութագրւում է անհատականացուած աւանդոյթների ուժեղացմամբ: Փիլիսոփայ Պ. Ռոդոսսկին (Ք.ա. 180-110 թթ.) գրում էր, որ դաստիարակութեան ամենակարեւոր խնդիրը մարդուն իր սեփական բնութեան համեմատ ապրել սովորեցնելն է: Սեփական բնութիւն ասելով՝ Ռոդոսկին նկատի ունէր բնութիւնից մարդուն տրուած շնորհները: Այսինքն՝ անհատական զարգացումը կապուած է մարդու բնութեան իրականացմամբ, միայն այս դէպքում նա կարող է ազատ լինել:*

*Ազատ անհատի դաստիարակութեան գաղափարները նոր որակ ստացան վերածննդի ժամանակաշրջանում (XIV-XVI դդ.): Այժմ խօսքը գնում էր մարդու ներքին հնարաւորութիւնների իմացութեան մասին: Եւ ինչպէս Լ. Մ. Բատկինն է գրում. «Միայն լուսաւորական դարաշրջանի վերջում ազատ անհատի հիմնախնդիրը ձեւա-*

© National Library of Armenia